

The article analyzes the state of tourism activity, considers the fundamental trends of tourism development in RA and NKR, as well as dwells on the dynamics of the changes within international and domestic tourism. It also discusses the place of tourism in the economy of the republic, the basis of tourism in the economy of the social status of tourism.

Some recommendations are offered on the enhancement of the tourism activity, which may underlie the state policy of tourism development in RA and NKR.

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 378.147:809. 198. 1

Հայոց լեզվի մեթոդիկա, բուհական

ԴԵՐԱՆՎԱՆ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ

Ս.Ա.Մինասյան

Դերանունը՝ որպես առանձին խոսքի մաս, ունենալով յուրահատուկ քերականական հատկանիշներ, ինչպես հայտնի է, արեղյանական շրջանում լուծարվել ու բաշխվել է հարաբերակից խոսքի մասերի՝ գոյականի, ածականի, թվականի, մակբայի հարթությունում (1. 2): Մ. Արեղյանի կողմից գոյականի ու դերանվան թվի քերականական կարգի կանոնը տրվում է մեկտեղված՝ «...գոյականի գաղափարի պատկերացումը իբրև մեկ կամ շատ» (1, 335. 2, 271), իսկ հոգնակի թվի կազմությունը գոյականի հոլովի հետ է մեկտեղում (բոլորն էլ այդ կարգերը հարաբերակցային շարքում են քննարկում ընդհանրապես՝ ելնելով այդ խոսքի մասի ձևաբանական շարային առանձնահատկությունից, առավել ևս իմաստաբանական ծանրաբեռնվածության հստակ պարզաբանումների համար, որը Էդ Աղայանը շարակարգայինով է (7, 70) առանձին-առանձին ներկայացնում (ն. տ., 263-272):

XX դ. կեսին Ս. Աբրահամյանի կողմից նոր հայեցակետով հիմնավորվելով՝ դերանունն առանձին խոսքի մաս է ճանաչվել (3): Արդի ժամանակահատվածում կարծես փորձ է կատարվում նորից լուծարելու այն: Մ. Ասատրյանն իր ժամանակին նշել է. «...արդի քերականական համակարգով ներկայացված դերանունները քերականական միասնական խումբ չեն կազմում: Բայց դրա հետ միասին անժխտելի է նաև այն, որ դերանվան մեջ մտցվող առանձին բառախմբեր իրենց յուրահատուկ քերականական հատկանիշներով տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանք են հատկապես անձնական, փոխադարձ, ցուցական և հարցական-հարաբերական դերանունները: Ըստ երևույթին, հենց այդ բառերն էլ կազմում են ժամանակակից հայերենի *խկական* դերանունները» (11, 167):

Դերանվան՝ որպես քերականական յուրահատուկություններ ունեցող խոսքի մասի, ուսուցման գործընթացում շատ դժվարություններ են հաղթահարվում տնտեսների ու քերականական կարգերի մանրամասնման բնագավառում (հատկապես բակալավրիատի, մագիստրատուրայի բաժիններում՝ կրտսեր, միջին և ավագ դասարանների համար մասնագետ պատրաստելիս): Դերանվան հոլովման քերականական կարգին, նմանապես թվի կարգին պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել, որովհետև լինելով ամենօրյա գործուն բառերի թեքված ձևեր՝ մասնագետները պարտավոր են գիտականորեն համաժամանակյա ու տարածամասնակյա մոտեցումներով խոր իմանալ, դժվարահարույց հարցերը հիմնավորապես մեկնաբանել՝ օգտագործելով համադրման, հակադրման, որոնողական մեթոդները, հաճախակի կիրառելով ուղղորդող հարցեր: Ի հակադրություն դպրոցական մակարդակի, բուհի մատչելիությունը չպետք է շրջանցի «անհասկանալի, անմեկնելի թվացող

հարցերը» կամ արդի հայեցակետով դերանվանական *հիսրը* «...ձևաբանորեն անտարրալուծելի համարել» (11, 172):

Դերանվան թվի քերականական կարգն առկա բաժնում ուսուցանվում է առանձին դասաժամի՝ դեմքի քերականական կարգից հետո՝ համադրվելով ու հակադրվելով արդեն ուսուցանված գոյականի թվի կարգին, ինչպես նաև դերանվան յուրաքանչյուր տեսակ անգնելիս, կրկնության մեթոդաբանական հայեցակետով, նորից ուշադրություն է դարձվում թվին (հեռակա բաժինը կարող է մանրամասն բացատրություններով ու լրացված գործնականներով առկցուն մեթոդական օժանդակ ուղեցույցի): Ամրակայող ու փոխներգործող, հատկապես մտազրոհային, հենակետային ազդանշային, շղթայիկային ձևերը գերադասելի է առավել շատ սեմինար-գործնականների դասաժամներին կիրառել: Ընդհանրապես՝ «ԹՎի քերականական կարգը դրսևորվում է գոյականական, դերանվանական և բայական համակարգերում» (12, 226): «Թվակարգը դերանունների մեջ ներառում է առարկայանիշ խմբեր... ունի իմաստաբանական ու կադապարման յուրահատկություններ» (ն. տ., 230): Գ. Ջահուկյանն այդ կապակցությամբ նշել է. «Դերանվանական թվակազմությունը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով. 1. եզակիի և հոգնակիի ձևերի տարարմատությամբ և տարահիմքությամբ, 2. ուղիղ և թեք հոլովների թվային հակադրության տարբեր արտահայտությամբ, 3. հոգնակիի տարածված տիպերից տարբեր ձևավորմամբ» (13, 213): Արժե նաև հավելել Հր. Աճառյանի՝ խորիմաստ ու ճանաչողական լայն հնարավորություններ տվող համընդհանուր համեմատական լեզվաբանական տեղեկություններից մի հատված, ինչպես՝ «Լան լեզուն, որ գիտեն երկակի թիվը, օրինակ, հոտենդոտյան նամա լեզուն, որ երեք դեմքերի, երեք սեռերի համար էլ ունի եզակի, երկակի և հոգնակի: Մեմականներից էլ արաբերենը գիտի երկակի թիվը դերանունների մեջ... Միկրոնեզյան լեզուների մեջ եռակիի վրա ավելանում է դեռ քառակի (quatro) դերանուն, որ ցույց է տալիս *չորս թիվ*: Այս կարգի լեզուների մեջ հոգնակին սկսվում է բնականաբար հինգից, որ նրանց հաշվական գրության հիմքն է կազմում: Ըստ այսմ ասվում է՝ Եզակի-են մենակ. Երկակի-մենք երկուս. Եռակի-մենք երեքս. Քառակի-մենք չորսս. Հոգնակի-մենք հինգ և ավելի:

Սրանց հակառակ՝ յավայերեն լեզվում դերանունը թիվ չունի՝ *ես և մենք, դու և դուք, նա և նրանք* միևնույն բառերն են» (8, 8-9):

Դերանվան հոգնակի թվի արտահայտության ու բովանդակության դիտվածքների (պլան) մեկտեղված ամենահստակ ամբողջացումն ու խմբավորումը տվել է Ս. Աբրահամյանը, այն է՝ դերանուններն ունեն թվի կարգ ունեցողներ ու չունեցողներ: «ԹՎի կարգ ունեցող դերանունները երեք խմբի են բաժանվում:

1. Դերանուններ, որոնք ունեն եզակի և հոգնակի թիվ:
2. Անեզական դերանուններ:
3. Անհոգնական դերանուններ» (3. 192, 4. 100, 5. 177, 6. 231):

Դերանվան հոգնակի թիվն ուսուցանելիս, բնական է, մեծ մասամբ արդի ձևաբանական ելակետային ձևերին ենք անդրադառնում (եզակի և հոգնակի ուղղական հոլով), մյուս բառաձևերը՝ հարացուցային ու շարակարգային, հոլովի ու հոլովման ուսուցման ժամանակ են քննարկվում: Ուշադրություն է դարձվում նաև հետևյալին՝ այդ/ս/ն/ա/ի, նույն/ա/ի, ինչ/ա/ի և նման այլ դերանուններ փոխանվաբար կիրառվելիս –ՆԵՐ-ից բացի ստանում են նաև -Ք, օր՝ *այդ/ա/իսք, նույն/ա/իսք, ինչ/ա/իսք*. վերջինս «... չի հոլովվում» (3, 194), որը սակավ գործածվող ու հնաբույր արտահայտություն է:

ԵԶԱԿԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանուններից են՝ ես, դու, նա, ինքս, ինքդ, ինքը (անձնական), սա, դա, նա, մյուս/ը (ցուցական), ով, ինչ, որ (հարցահարաբերական), ուրիշ/ը, ոմն (անորոշ): Հոգնակի թվի իմաստը բնութագրելիս, միշտ առանձնացվում են անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի առանձնահատկությունները՝ հակադրելով երրորդ դեմքին, այն է՝ «*Մենք, ինքներս* անձնական դերանունները ցույց են տալիս *խոսողին և այն անձերին, որոնց անունից հանդես է գալիս խոսողը...*, *Դուք, ինքներդ* անձնական դերանունները ցույց են տալիս *խոսակցին և այն անձանց, որոնց դիմում է խոսողը...*, Նրանք, իրենք կամ ինքները անձնական դերանունները ցույց են տալիս այն անձերին, որոնց մասին գնում է խոսքը» (11. 168): Մեծատառով գրված Դուք-ը ու դրա թեքման հարացուցային բոլոր ձևերը եզակիի իմաստ ունեն (հետը կապակցվողները, ըստ անհրաժեշտության, համաձայնում են հոգնակի կառուցվածքին): Դրանք քաղաքավարական դիմում են խորհրդանշում: Եզակիի իմաստ ունի նաև հեղինակային ՄԵՆՔ-ը ու դրա թեքման հարացուցային բոլոր ձևերը, որոնք ևս շարահյուսական արտահայտություններում համաձայնեցված են դրսևորվում (3, 278. 11, 168):

Ցուցական դերանունների հոգնակին (սա, դա, նա, մյուս/ը-սրանք, դրանք, նրանք, մյուսները) ցույց է տալիս տարածությամբ ու ժամանակով խոսողին, խոսակցին կամ երրորդ անձնավորությանը

մոտ հաշվարկելի առարկաներ (դիմային հարաբերությունները բնորոշվում են արմատական Ս, Դ, Ն *նաշարք* տարբերակիչ հատկանիշ ձևեր բերած, հոդերից սնրված հնչյուններով (*մյուսը* դերանվան Ս-ն նրորող դեմքի հետ է հարաբերակցվում)):

Դերանունների հոգնակներտ մասնիկներն անվանական են, այն է՝ -Բ (-ԵՆ/Բ, -ՈՆ/Բ՝ -ՈՆԲ, -Բ/ԵՐ՝ -ԲԵՐ), -ՆԵՐ, -ԵՐ: Հոգնակներտ մասնիկները կցվում են համապատասխան դերանվան եզակի թվի կամ ուղիղ ձևին (արդի հայեցակետով)՝ *բացարձակ հիմքին* (մյուս, ով, որ, ինչ, ուրիշ), կամ թերված ձևին՝ *հարաբերական հիմք* (նա-նրանք, սա-սրանք, դա-դրանք, ինքը-իրենք, ոմն-ոմանք) կամ *տարահիմք, տարարմատ* ձևին (ես-մենք. պատմական հայեցակետով նաև դու-դուք. 9, 681, 14, 130, ն. տ., 154՝ *tu* և *iu-s*՝ ջուք. բնիկ հայերեն դու-ի համաբանությամբ՝ ջ>դ.): Ուստի դերանունների հոգնակի կազմությունը և՛ գոյականի նման նույն արմատից է՝ *անվանական*, և՛ տարբեր, որը կարելի է կոչել՝ *դերանվանական* (ինչպես հոլովման քերականական կարգն է բնութագրվում): Ըստ այդմ էլ կարելի է *տիպաբանական խմբերի* բաժանել մի քանի հիմունքներով: Դրանց հերթականությունը գերադասելի է պահպանել՝ գործածելով համապատասխան գծապատկերները, որոնք ներկայացվում են առանձին: Օրինակ՝ ըստ հոգնակներտ ձևայինների՝ հոգնակներտ վերջավորությունների՝ -ՈՆԲ, -ԵՐ, -ՆԵՐ, -Բ, -ԲԵՐ(գծ. 1), ըստ արմատի և հիմքի ընդհանրության ու տարբերության՝ *նույնարմատ, տարարմատ, նույնահիմք, տարահիմք* (գծ. 2), ըստ հոգնակներտ մասնիկների կազմության՝ *պարզ և բաղադրյալ* (գծ. 3): Նպատակահարմար է բանաձևերով առաջնորդվել՝ գործածելով համապատասխան խորհրդանիշները (օտար կամ հայերեն տառերով միանշանակ խորհրդանշանային ցուցիչներ՝ նշույթներ, դեռևս չունենք հայ լեզվաբանությունում, թեև բավականին փորձարարական կիրառություններ եղել են ու կան՝ Աղայան Էդ., Ջահուկյան Գ., Գալստյան Ս., Հովսեփյան Լ. և ուրիշներ. ահա պայմանական մի քանի հայատառ խորհրդանիշներ. ԲՀ՝ բացարձակ հիմք, ՀՀ՝ հարաբերական հիմք, ՏՀ՝ տարահիմք, ՆՀ՝ նույնահիմք, ՆԱ՝ նույնարմատ, ՏԱ՝ տարարմատ, Ա-արմատ՝ հիմնական ձևային, ա-ածանց՝ բառակազմական երկրորդական ձևային, ք-քերականական վերջավորություն՝ բառահարաբերական երկրորդական ձևային (որը, գավոր, քերականական կարգը չի տարբերակում), ձ-ձևային՝ որևէ տարրային, որը գուրկ է բառակազմական կամ բառահարաբերական հատկանիշից. այսպիսի պայմանական տառեր գործածել է Էդ. Աղայանը (7, 146). միայն հոդակապի համար *ներույթ* անվամբ -ն փոքրատառ խորհրդանիշը, -ձ-ն՝ ձևորդ՝ վերջավորության համար, իսկ -ք-ն՝ քերականական ածանց իմաստով, ներքին հոլովման ցուցիչը թեք գծի հետ է դրվում, ինչպես՝ /ք. (Է. Աղայանը նաև փորձել է բանաձևեր տալ, բայց հստակ չի ստացվել (ն. տ., 265) գավոր, առ այսօր դեռևս լեզվաբանական այդ իրողությունն ամբողջացած չէ, թեև մասնակի փորձեր կատարվում են):

ԵԶԱԿԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՐԱՆՆՈՒՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ (գծ. 1)

1. -ԵՐ՝ ա) ԲՀ + ք, օրինակ՝ *ինչ+եր-ինչեր*՝ Աք:

բ) ՀՀ + ք. ՀՀ (ԲՀ + ք՝ Ս, Դ հոդեր) + ք՝ ԵՐ: Ձևավորվում է ուղղական հոլովի եզակի թվից. *ինքս/դ/ը՝ ինքներս, ինքներդ, ինքները* (վերականգնվում է պատմական-Ն վերջնահնչյունը, ԵՐ>ՆԵՐ-ը միաձույլ մասնիկ չի համարվում, որովհետև արմատական ն-ն՝ ն/ը, գիտակցվում է, իսկ հոդը տեղաշարժվում է վերջը՝ *ինքներս-Աքք*):

2. -ՆԵՐ՝ ՀՀ + ք. ՀՀ (ԲՀ + ք՝ Ն/Ը հոդ)+ք՝ ՆԵՐ: Ձևավորվում է ուղղական հոլովի եզակի թվից. փոխանվանական արժեքով՝ մյուսը-մյուսները և նման մյուս ցուցական, անորոշ դերանունները՝ այսպիսիները, այդպիսիները, այնպիսիները, ինչպիսիները, որպիսիները, ուրիշները, այսինչները, մի քանիսները և այլն:

3. -Բ՝ ա) ԲՀ + ք: Ձևավորվում է ուղղական հոլովի եզակի թվից. *դու+ք՝ դուք*. արդի հայեցակետով է դա (7, 266) և նույնարմատ է համարվում, իսկ պատմականորեն՝ տարարմատ (հնդեվրոպական *iu-s*՝ ջուք. բնիկ հայերեն *դու-ի* համաբանությամբ ջ>դ. այսինքն՝ *դու և դուք* ձևերը, ըստ ծագման, տարարմատ են (14, 130, ն. տ., 154)):

բ) ՏՀ + ք. Նույնարմատ՝ ՏՀ՝ ՀՀ՝ [ԲՀ (Ա+/ք)+ք] +ք՝ նա> նրա+ն+ք: Ձևավորվում է տրական հոլովի եզակի թվից. *առ, սեռական, տրական՝ սրա, տրականի որոշյալ առում՝ սրան* (անորոշ ձևը կիրառական չէ), *հոգնակի թիվ՝ սրանք, դա-դրա-դրան-դրանք, նա-նրանք՝ վերջինս անձնական և ցուցական դերանուն է* (Մ. Ասատրյանը եզակի թվի տրական հոլովաձևը արդի հայեցակետով, *ձևաբանորեն անտարրալուծելի և տարարմատ կամ տարահիմք* ձևեր է համարում և փաստում - *ԱՆԲ-ով վերջավորվող ձև* (11, 172), որը գերադասելի չէ: *Տարարմատ՝ ՏԱ+ք+ք՝ ԻՐ+ԵՆ+Բ ինքը-իր/յուր/իր-իրենք՝* ձևավորվում է տրական հոլովի եզակիից (նաև ձգտում կա նույնարմատ համարելուն (7, 268):

գ) ՏՀ + ք: Ձևավորվել է գրաբարում՝ համապատասխան օրինաչափությամբ: Տարահիմք բանաձևն է ՏՀ /ՀՀ (ԲՀ/Ա+/ք)+ք: Օրինակ՝ *ոմն՝ ոման +ք: Դա գրաբարյան հոգնակի ձևի մնացորդ է՝*

ոմն+ք>ոմնք՝ ոմանք: Բաղաձայնների կուտակումից խուսափելու համար ձայնավոր է ավելացվել, կամ, ավելի ճիշտ, Ը/Ա հերթագայություն է կատարվել, որպեսզի բարենհնչուն լինի, ուստի որ բառում որ արմատական **Ն**-ն չի պահպանվում, այդ ձևայինների խումբը կոչում են *հոգնակերտ մասնիկ*, համաբանորեն նույնը գործածում են նաև ՈՄՆ-ի վերաբերյալ՝ -ԱՆԲ (այս մոտեցումը գործառվում է հատկապես պարզունակ դասագրքերում՝ հետևելով մատչելիության սկզբունքին, իսկ բուռնում դա գերադասելի չէ): Գիտականորեն *ոմանք*-ի համար ճիշտ մասնիկը **–Բ**-ն է՝ գրաբարյան հիմքակառույցով:

ԽԱՌԸ՝ ա Բուն հոգնակերտ մասնիկների բարենունչ բաղադրություն է՝ **Բ + ԵՐ՝ ԲՅ + ք + ք՝ ԲԵԵՐ՝ ԲԵՐ. ով/+ քեր**: Ձևավորվում է ուղղական հոլովի եզակի թվից: Միջին հայերենում նաև ՈւլԲ՝ *ով +ք*, ձևն էր կիրառվել (15, 98):

բ Այլ մասնիկների ու հոգնակերտի բաղադրություն՝ **ՈՆ+Բ**: Ձևավորվում է ուղղական հոլովի եզակի թվից: Օրինակ՝ որ՝ որ+ո+ն+ք (ՈՐ-ը գրաբարում **–Ո** արտաքին հոլովման պատկանալու պատճառով աշխարհաբարում **–Ո+Ն+Բ>–ՈՆԲ** բաղադրյալ հոգնակերտով է ամբողջացել. զգալի է նաև այլ բառերի համաբանության գործոնը, ինչպես՝ մեր-ոնք, ձեր-ոնք. որոնք կառույցի **–Ն** ձևային աշխարհաբարում է հավելվել):

ԸՍՏ ԱՐՄՏՏՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎՈՒԹՅԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ (զծ. 2)

ՏԱՐԱՐՄԱՏ՝ 1. ա ՏԱ՝ ՀՀ (ԲՀ+ձ) + ք՝ **Բ**: Օրինակ՝ ես- մենք (հնդեվրոպական eg՝o ձևից *ես* եզակին է ձևավորվել (14, 121), իսկ me-s ձևից՝ բնիկ հայերեն *մեր* հոգնակին (10, 309. 14, 137), որը միջին հայերենում **Ն**-ի հավելմամբ դարձել է ՄԵՆԲ):

բ ՏԱ՝ ՀՀ (ՏՀ +ք)+ք՝ **Բ**: Օրինակ՝ ինքը>իրենք (իր+են+ք՝ Աքք. *ինքը* եզակի ձևին սեռականում ուրիշ արմատ է հաջորդել՝ զուգաբանություն՝ **իր**. կատարվել է պատմական հնչյունափոխություն՝ ի>յու, յուր. իր՝ ի-ի անկումից ձևավորվել է արդի **իր**-ը, տրականում ավելացել է **–ԵՆ** հոլովակերտը՝ **իրեն**, որից էլ ձևավորվել է հոգնակին, իսկ Էդ. Աղայանը *ինքը* հիմքը տարրալուծում է՝ *ի-նքը* և *ի-ր*, *ի-ր-են*-ի հետ նույնահիմք համարում (7, 268). Հր. Աճառյանը քիչ այլ մեկնություններ ունի (8, 119). հին հայերենում *իր/իր*-ը եզակի ուղղական հոլովածն է չունենում, իսկ հոգնակի ուղղականը *իրենանք*-ն էր. ուշ *ինքն* համարվեց *իր*-ի եզակի թվի ուղղականը. անդրադարձ դերանուն էր համարվում (8, 120). *իրեն* հոլովածը միջին հայերենում է ձևավորվել (ն. տ.) *իր*-ը սերվել է հնիս. *sewe* սեռականից *ր* բաղադրիչի հավելումով (8, 117)):

ՆՈՒՅՆԱՐՄԱՏ՝ 1. ԵՐ ա ԲՀ՝ Ա+ք՝ **ԵՐ**. ինչ՝ *ինչեր*):

բ ՀՀ (ԲՀ +ք՝ Ա, Դ հոդեր) + ք՝ **ԵՐ**, ինչպես՝ ինքս, ինքդ, ինքը՝ ինքներս, ինքներդ, ինքները (վերականգնվել է պատմական **–Ն** վերջնահնչյունը և հոդը տեղաշարժվել է վերջը՝ Աքք):

գ ՀՀ (ԲՀ +ք՝ Ն/Ը հոդ)+ք՝ **ՆԵՐ**: Այս հոգնակերտ ձևային դերանունները փոխանվանական արժեքով են, ինչպես՝ մյուսը-մյուսները և այլ *ցուցական, անորոշ* դերանուններ՝ այսպիսիները, այդպիսիները, այնպիսիները, ինչպիսիները, որպիսիները, ուրիշները, այսինչները, մի քանիսները և այլն (Ա. Աբրահամյանը «այդպես-ներ, ինչու-ներ...» ձևերը մետալեզվական է համարում (5, 161):

դ ԲՀ՝ Ա + ք՝ դու- դուք (այսպիսի դիտարկումն արդի հայեցակետով է (7, 266), իսկ պատմականորեն՝ հնդեվրոպական *iu-s՝ ջուք* ձևն է, որը բնիկ հայերեն *դու*-ի համաբանությամբ Ջ-ն հնչյունափոխվել է Դ-ի. *դու* և *դուք* ձևերը ստուգապես տարարմատ են (14, 130, ն. տ., 154)):

2. ԲՀ + ք (ք + ք) այսինքն՝ ԲՀ+ք+ք՝ **ԲԵԵՐ՝ ԲԵՐ. ով- ովքեր** (միջին հայերենում նաև ՈւլԲ՝ *ով +ք*, ձևն է եղել (15, 98)):

3. ԲՀ + ք՝ **–ՈՆԲ** (ք + ձ+ք): Օրինակ՝ որ> որ-ո-ն-ք: Վերջին Ո-ն արտաքին թեքման հին քարագած ցուցիչ է, իսկ Ն-ն համաբանությամբ գործածված տարրույթ է: Բ-ն բուն հոգնակերտն է: **ՈՐ** հարցահարաբերական դերանվան հոգնակի հին ձևը չի պահպանվում՝ որք: **–ՈՆԲ**-ը որպես բաղադրյալ թվանիշ թեքույթ օրինական է, քանի որ եզակին ՈՐ-ն է: Այս բառի Ո արմատը և **–Ր** մասնիկը առանձին չեն գիտակցվում՝ Աա (10. 548, 574):

4. Տարահիմք՝ ա) ՏՀ՝ ՀՀ [ԲՀ (Ա+/ք)+ ք] +ք՝ **Բ**: Օրինակ՝ *սա*, սեռական, տրական՝ *սրա*, որոշյալ առում՝ *սրան*, հոգնակի թիվ՝ *սրանք*, և այդպես՝ դա-դրա-դրան-դրանք, նա-նրանք (վերջինս անձնանիշ ու իրանիշ է, ուստի խոսքի համապատասխան ձևում անձնական կամ ցուցական դերանուն է դառնում):

բ ՏՀ՝ ՀՀ (Ա+/ք)+ ք՝ **Բ**: **ՈՄՆ** անորոշ դերանվան հոգնակին նշված բանաձևով է կազմվում: Այն պահպանում է գրաբարյան ձևը՝ *ոմն-ոմանք* (**որ, ոմն** դերանունների հոգնակիի կազմության վերաբերյալ կա հետևյալը. «Բ հոգնակերտով կազմվում են նաև *ոմն*, *որ* դերանունների հոգնակիները՝ *ոմանք*, *որոնք*» (3, 193). Էդ. Աղայանը նշում է. »*Որոնք* և *ոմանք* ձևերն ունեն *մերոնք*, *վարդանանք* ձևերի կառուցվածքը (7, 269): Հեղինակը դերանվանական հոլովում բաժնում մանրամասնում է դերանունների բառաձևերի կազմությունն ըստ իմաստի ու ձևի, փորձում բանաձևերի վերածել, բայց

հատակեցված չէ (դա առաջին ամբողջական փորձն է այդ բնագավառում. հոգնակերտ -անք, -ոնք - ենք- ձևայինները լիարժեք չեն. հատկապես *ոմն* դերանվան համար դա համաժամանակյա թե տարաժամանակյա մոտեցումներով չի արդարացվում, որովհետև *ոմն+անք* ձև չունենք):

ԸՍՏ ՀԻՄՔԵՐԻ ՈՒ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ (զծ. 3)

Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանունների հիմքերի և մասնիկների կազմությունը, բնական է, *պարզ ու բաղադրյալ* է (առանց բառակազմական ձևայինների), որոնք հիմնականում ունեն համագործածական *բացարձակ ու հարաբերական* ձևաբանական անվանումները (4, 14): Ոմն անորոշ դերանունը ձևաբանական այդպիսի միավորներով տարորոշելը հայ լեզվաբանությունում հստակ չէ, նման բնական դժվարահարույց խնդիր է նաև *մե-ն-ք*-ի հիմքի կազմությունը և այլն: Պարզ հիմքերը համընկնում են բացարձակ հիմքերին (Էդ. Աղայանը որոշները *նշույթավոր կամ աննշույթ հիմքեր* է անվանում՝ տարբեր մոտեցումներով (7, 264), իսկ Գ. Զախովյանը՝ *մաքուր հիմք* (13, 160). *բնավոր, անբուն* հիմքերին անդրադառնալով մեր նպատակից դուրս է):

ՊԱՐԶ ՀԻՄՔԵՐ ԵՎ ՀՈԳՆԱԿԵՐՏՆԵՐ: ՊԱՐԶ ՀԻՄՔԵՐ- Պարզ են կոչվում դերանվանական այն հիմքերը, որոնք հիմքատարբերակիչ որևէ նշույթ կամ ցուցիչ չունեն և ձևաբանորեն անտարրալուծելի են: Դերանվանական պարզ հիմքերը կարող են համընկնել *բացարձակ* հիմքին (օր.՝ *ինչ-ի, ինչ-եր*) և *հարաբերականի* մի տեսակին (օր.՝ *դու-ք, ձե-ք*): Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանուններից հոգնակի թվում *պարզ* հիմք ունեն դու-ք, ով-քեր, ինչ-եր, որ-ոնք, ինչպիսի-ք բառածևերը, որոնք խմբավորվում են երկու բանաձևում՝ 1. **ԲՆ + ք**՝ ինչ-եր, որ-ոնք, ինչպիսի-ք, 2. **ՀՆ + ք**՝ դու-ք, ով-քեր:

ՊԱՐԶ ՀՈԳՆԱԿԵՐՏՆԵՐ: Պարզ են այն թվանիշ ձևայինները, որոնք անտարրալուծելի են: Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանուններին կցվում են հետևյալ պարզ հոգնակերտները՝ թվանիշ ձևայինները՝-եր, -ներ, Բ: Դրանք համադրվում են պարզ կամ բաղադրյալ հիմքի վերջից՝ դու+ք, ինչ+եր, ինչպիսի+ք, մե-ն+ք, ոմ-ա-ն+ք, դ-ր-ա-ն+ք, կամ բաղադրյալ՝ հարաբերական հիմքի ներսում (հողերից առաջ)՝ մյուս+ներ-ը, ինքն+եր-ս (Էդ. Աղայանը *ինքր* հիմքը տարրալուծում է՝ *ի-ն-ք-ը*. 7, 268): Պարզ հոգնակերտները, նկատի ունենալով նաև հիմքի նկատմամբ գրաված դիրքը, կարելի է խմբավորել հետևյալ բանաձևերով՝ -Բ՝ 1. **Հ+ք**՝ դու-ք, 2. **ԲՆ + ք**՝ ինչպիսի-ք, 3. **Հ+/ձ+ք**՝ մե-ն-ք, 4. **ՀՆ (Ա+ /ք) +ք**՝ ոմ-ա-ն-ք, 5. **ՀՆ (Ա+ /ք +ք) +ք**՝ դ-ր-ա-ն-ք, -եր՝ 1. **ԲՆ + ք**՝ ինչ-եր, 2. **ՀՆ (ԲՆ+ք) +ք**՝ ինքն-եր-ս, -ներ՝ **ՀՆ (ԲՆ+ք) +ք**՝ մյուս-ներ-ը, ինչպիսի-ներ-ը:

ԲԱՂԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ ԵՎ ՀՈԳՆԱԿԵՐՏՆԵՐ: ՀԻՄՔԵՐ-Բաղադրյալ են համարվում դերանվանական այն հիմքերը, որտեղ հիմքատարբերակիչ որևէ նշույթ կամ ցուցիչ կա և որոնք ձևաբանորեն տարրալուծելի են: Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանուններից հոգնակի թվում բաղադրյալ հիմք ունեն՝ մենք, նրանք, իրենք, ինքներս/դ/ը, ա/դ/նրանք, մյուսները, ոմանք: Դրանց տիպաբանական խմբերն ունեն հետևյալ բանաձևերը. 1. **ԲՆ + ձ + ք**՝ մե-ն-ք, 2. **Հ (Ա+/ք) +ք՝ ոմ-ա-ն-ք**, (այս ձևը պատմական է և անցումային շրջանում է, ուստի պարզ ու բաղադրյալ ձևերի տարբերակումը վիճահարույց է. ժատմականորեն անցումային շրջանում է), 3. **ՀՆ (ԲՆ +ք +ք) +ք**՝ ն-րա-ն-ք, ս-րա-ն-ք, 4. **ՀՆ (ԲՆ +ք) +ք**՝ ինքն-եր-ս, մյուս-ներ-ը, այնպիսի-ներ-ը, ինչպիսի-ներ-ը, 5. **ՀՆ (ԲՆ +ք) +ք**՝ իր-ենք:

ԲԱՂԱԴՐԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԵՐՏՆԵՐ: Բաղադրյալ են այն հոգնակերտները՝ թվանիշ երկրորդական ձևայինները, որոնք տարրալուծելի են, համադրվում են եզակի հիմքին ու գործուն են արդի շրջանում: Դրանք երկուսն են՝ - **ՔԵՐ** և -**ՈՆՔ**, որոնք, կցվելով *եզակի ու հոգնակի* թիվ ունեցող *ով, որ* հարցահարաբերական դերանուններին, ունենում են հետևյալ ձևաբանական բանաձևերը՝ 1. **Հ + ք (ք+ք)**՝ ով-քեր (ք+ եր), 2. **ԲՆ + ք (ք+ք)**՝ որ-ոնք (ո+ն +ք):

ԱՆԵԶԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անեզական կամ միայն հոգնակի թիվ ունեցող դերանուններն են՝ փոխադարձ՝ *միմյանց, իրար, մեկմեկի կամ մեկմեկու* և որոշյալ *բոլոր* դերանունը (միմյանց-ի –Յ-ն թեքված ձևի հոգնակիության ցուցիչ է, մեկմեկի կամ մեկմեկու կրկնված արմատը ևս հոգնակիության իմաստին օժանդակող միջոց է, *իրարն ու բոլորը* հոգնակիությանը նպաստող մասնիկ չունեն՝ միայն իմաստով են այդպիսին):


ԱՆՀՈԳՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Անհոգնական կամ միայն եզակի թիվ ունեցող դերանուններն են՝ յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը:


Գծապատկերներ

Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանունների տիպաբանական բանաձևերը


ՊՃ. 1



ՊՃ. 2



Գծ.3



ԳՈՐԾՆԱԿԱՆՆԵՐ

Դերանվան թվի քերականական կարգը ամփոփող **հարցեր**

1. Հաշվարկելի առարկաների վերաբերյալ ձևաբանական քանի՞ թիվ կա:
2. Հայերենում դերանունը թվի կարգ ունի՞:
3. Եզակի ու հոգնակի թվերից բացի այլ թիվ կա:
4. Երկակի, քառակի, հոգնակի թվերը ի՞նչ են արտահայտում:
5. Դերանվան թվի կարգի հետ կապված ինչպիսի՞ խմբավորումներ ընդունում մեծ լեզվաբաններ Գ. Ջահուկյանը և Ս. Աբրահամյանը:
6. Անձնական դերանունների առաջին դեմքի հոգնակին ինչպե՞ս է կազմվում:
7. Անձնական դերանունների երկրորդ դեմքի հոգնակին ինչպե՞ս է կազմվում:
8. Անձնական դերանունների երրորդ դեմքի հոգնակին ինչպե՞ս է կազմվում:
9. Անձնական դերանունների երրորդ դեմքի համար քանի՞ հոգնակի ձև կա:
10. Ցուցական դերանունների առարկային փոխարինող *սա, դա, նա* ձևերի հոգնակին ինչպե՞ս է կազմվում:
11. Փոխադարձ դերանվան թվի քերականական կարգն ինչպե՞ս է արտահայտվում:
12. Նույնարմատ եզակի և հոգնակի դերանուններ լինո՞ւմ են:
13. Տարարմատ եզակի և հոգնակի դերանուններ լինո՞ւմ են:
14. Տարահիմք եզակի և հոգնակի դերանուններ լինո՞ւմ են:
15. Եզակի և հոգնակի դերանունները նույնահիմք լինո՞ւմ են:
16. Հոգնակի թիվ կազմող դերանվանական հիմքերը պարզ ու բաղադրյալ լինո՞ւմ են:
17. Դերանվանական թվանիշ ցուցիչները պարզ ու բաղադրյալ լինո՞ւմ են:
18. Համապատասխան գծապատկերներից օգտվելով՝ ի՞նչ տիպի բանաձևեր կարելի է առանձնացնել:
19. Փոխանվանական արժեքով դրսևորվող դերանունների հոգնակին ի՞նչ տիպի բանաձևով կարելի է արտահայտել:
20. Պարզ և բաղադրյալ հիմքերը ի՞նչ ընդհանրություններ կամ տարբերություններ ունեն բացարձակ և հարաբերական հիմքերի հետ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

1. Նշված դերանունները ո՞ր թվի իմաստ ունեն տրված նախադասություններում:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ... (ՀԾ)

Հարգելի հայրենակից, *Դուք* ինձ չեք ճանաչում, թեև վաղուց է, որ հարազատ մարդ եք դարձել ինձ համար: *Դուք* իմ գոյության մասին ոչինչ չգիտեք ... (ՀԲ)

Մեր կարծիքով, գերադասելի է ամեն ինչ մանրամասն բացատրել: *Մենք* ընդհանուր խոսելու իրավունք չունենք:

2. Ո՞ր դերանուններն ունեն հոգնակերտ ցուցիչներ:

Ովքե՞ր են աղմկում: Նրանք իրենց բոլոր խոստումները կկատարեն: Դրանց գույները իրար նման են: Միմյանցով հպարտանում են ու ոչ ոք դժգոհ չէ: ()

3. Խմբավորել թիվ ունեցող նույնարմատ դերանունները:

Դա դրանցից չի տարբերվում: Ինքներս պատասխան կտանք յուրայիններին: Յուր գործերը իր նման խճճված են, ուստի իրենցից նեղանան: Մենք մեր տղաներին կասենք:

Ես չիմացա, թե ինչպես, դու չիմացար, թե ինչու,

Հանդիպեցին մեկմեկու մեր երագները՝ առանց մեզ... (ՀՍ)

ԹԵՍՏԵՐ

. Ո՞ր շարքն է պարունակում միայն նույնարմատ հոգնակի թվի դերանուններ:

1. նրանք, նրանց, նրանցից, դրանցով

2. Դուք, ձեր, քո, ձեզնից
3. իրենք, իրենցով, իրավացի, իրենցից
4. ինձ, ինձնից, ինձանով, ինձնից
5. ինքը, իր, յուր, իրենց
6. մենք, մեր, մեզնից, ձեզնից
7. իրենք, իրենց, իրենցից, իրենցով

. Ո՞վ է ՄԵՍՐՈՊԱՏԱՌ հայերենի առաջին ուսուցիչը: Ճիշտ պատասխանն իր մեջ ունենա եզակի թվով անձնական դերանուն:

1. Մեսրոպ Մաշտոցը
2. Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը
3. Վերոհիշյալները
4. Նրանք
5. Ինքը

6. Տարոնի հացեկացցին՝ միայն ՆԱ:

. Ո՞ր շարքի դերանուններում կա միայն -ԵՐ հոգնակերտը:

1. ինքներս, ինչեր, ինքները, մյուսները
2. ինքները, իրենք, ովքեր, ինչեր
3. ինչեր, ինքներդ, ինքներս, ինքները
4. ինքներդ, մյուսները, եսեր, այլեր

. Ո՞ր շարքի դերանուններում կա միայն -ՆԵՐ հոգնակերտը:

1. ուրիշներ, ինքներս, այնպիսիները, ինքներդ
2. յուրայինները, ինքները, իրենք, մյուսները
3. մյուսները, ինչպիսիները, ինքները, իրայինները
4. այսպիսիները, մյուսները, որոշները, այդպիսիները

. Ո՞ր շարքի դերանուններում կա միայն բաղադրյալ հոգնակերտ:

1. ովքեր, ոմանք, ինքներս, իրենք
2. դրանք, իրենք, ինքներդ, ոմանք
3. որոնք, ովքեր
4. մենք, ոմանք

. Ո՞ր շարքի դերանուններում կա միայն պարզ հոգնակերտ:

1. դրանք, իրենք, ինքներդ, ովքեր
2. ուրիշներ, ինչեր, դուք, ովքեր
3. դրանց, իրենք, ինքներդ, որոնք
4. մենք, դրանք, իրենք, ինքներս

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965:
2. Աբեղյան Մ., Երկեր, հ. 2, Եր., 1974:
3. Աբրահամյան Ս., Արդի հայերենի դերանունները, Եր., 1956:
4. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975:
5. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981:
6. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974:
7. Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967:
8. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. II (համեմատությամբ 562 լեզուների, Դերանուն), Եր., 1954:
9. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I (վերահրատարակություն) 1971:
10. Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. III (վերահրատարակություն) 1977:
11. Ասատրյան Մ. Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989:
12. Պետրոսյան Հր., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Եր., 1974:
14. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Եր., 1989:
15. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Եր., 1975:

С. А. Минасян

Резюме

В данной статье тема раскрывается в типологическом аспекте.

Teaching grammatical category of number of pronouns.

S.A. Minasyan

Summary

In the given article the theme is considered by the typological aspect.

ԱՐՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРЦАХСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

1(25) 2012

ՀՏԴ 809.1981.1

Ժամանակակից հայոց լեզու

ԵՐԲ ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԲԱՌԻ ՇԱՐԱԽՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հ.Ս. Ղազարյան

Բարդ նախադասության ստորադասական հարաբերությամբ կապակցված բաղադրիչ նախադասությունների միջև եղած շարահյուսական կախվածության արտահայտման համար լեզվում գործառնում են հատուկ միջոցներ՝ ա) նշույթավոր կամ գործածական և բ) աննշույթ կամ շարահարական:

Նշույթավոր կապակցության մեջ իբրև նշույթ գործածվում են ստորադասական շաղկապներն ու հարաբերական բառերը: Իրենց դերով սրանք որակապես տարբերվում են: Շաղկապները, չունենալով նյութական իմաստ, կատարում են միայն կապակցական դեր, իսկ հարաբերականները, ունենալով նյութական իմաստ և արտահայտելով ընդհանուր, չտարբերակված առարկաներ ու հատկանիշներ, ունենում են երկակի գործառնությւն: Կապակցում են բարդ նախադասության բաղադրիչներ և միաժամանակ դառնում կախյալ նախադասության լիարժեք անդամներ:

Թե՛ ստորադասական շաղկապները, և թե՛ հարաբերական բառերը, իրենց գործառնությային արժեքով պայմանավորված, լինում են՝ ա) մենագործառնությային բ) բազմագործառնությային:

I խմբի մեջ մտնող բառերը բնորոշվում են շարահյուսական իմաստատարբերակիչ արժեքով, նրանց ընտրությունն արդեն իսկ կանխորոշում է կախյալ նախադասության լրացական բնույթը: Երկրորդ խմբի մեջ մտնող բառերը բնորոշվում են բազմագործառնությային արժեքով. նրանցով կապակցվում են շարահյուսական այլևայլ հարաբերություններ արտահայտող կախյալ նախադասություններ:

Վերջին իմաստով սույն հոդվածի սահմաններում մեզ հետաքրքրում է *եղբ* հարաբերական բառը: Կապակցման դերով այն գրաբարում գործածական չէր, նրա փոխարեն գործածվում էին *իբրև* և *յորժամ* շաղկապները: Միջին հայերենում ժամանակի շարահյուսական հարաբերություններ արտահայտելու համար հանդես են գալիս մի շարք նոր շաղկապներ ու հարաբերական բառեր՝ *եղբ*, *եղբ որ*, *քանի*, *քանի որ*, *մինչդեռ*, *հանց*, *հանց որ*, *մինչ*, *ինչ- որ*, *ինչոր* և այլն: *Իբրև* և *յորժամ* բառերով կապակցումը հանդիպում է միայն գրաբարատիպ բնագրերում [1,222]: Նշված շաղկապների ու հարաբերականների մեծ մասը անցել է ժամանակակից հայերենին: Նրանց մեջ իր գործառնությամբ և գործածականության հաճախականությամբ առանձնանում է *եղբ* բազմագործառնությային արժեքով բնորոշվող հարաբերական բառը: Ժամանակակից հայերենում նրա բազմագործառնությային լինելը